Հավելված N 61
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ

### 1. Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սննդամթերքի անվտանգության վարչության (այսուհետ՝ Վարչություն) անասնաբուժության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ անասնաբույժ (ծածկագիրը՝ 23-32.2-Մ4-1)

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Բաժնի ավագ անասնաբույժն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի ավագ անասնաբույժի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր անասնաբույժներից մեկը:

**1.4. Աշխատավայրը**

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

### 2. Պաշտոնի բնութագիր

**2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. Իրականացնում է անասնաբուժության ոլորտին առնչվող հակաանասնահամաճարակային միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը,
2. Մասնակցում է դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի վերլուծություն և մշակում հիվանդությունների օջախների վերացման համալիր միջոցառումներին,
3. Մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հակաանասնահամաճարակային միջոցառումների, կենդանիների, կենդանիներից մարդկանց փոխանցվող հատուկ վտանգավոր, կարանտինային հիվանդությունների արձանագրման դեպքում աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը,
4. Մասնակցում է պետական աջակցությամբ իրականացվող հակաանասնահամաճարակային միջոցառումների, դրանց իրագործման համար անհրաժեշտ գույքի, պարագաների և պատվաստանյութերի չափաքանակների ճշգրտման, ձեռք բերման և բաշխման գործընթացների կազմակերպմանը և իրականացմանը,
5. Մասնակցում է կառավարման մարմիններին բնագավառին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրմանը,
6. Մասնակցում է ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհրաժեշտության պարզաբանումներ և խորհրդատվություն տրամադրելուն,
7. Մասնակցում է անասնաբուժության ոլորտում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովմանը,
8. Մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող անասնաբուժության ոլորտին վերաբերող հանդիպումներին, խորհդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ

միջոցառումներին,
9. Իրականացնում է քաղաքացիների նամակների և դիմում բողոքների քննարկում և իրավասության սահմաններում բարձացված հարցերի լուծման աշխատանքները:

**Իրավունքները՝**

• Ուսումնասիրել և վերլուծել հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տվյալները,
• Մշակել դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի արդյունքների վերլուծությանը և հիվանդությունների օջախների վերացման համալիր միջոցառումների պլանը,
• Տիրապետել անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարման և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությանը՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,
• Բաժնի պետին ներկայացնել զեկուցագրեր՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին:

**Պարտականությունները՝**

• Հավաքագրել հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի և անասնաբուժական տարբերակված միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի վերաբերյալ տվյալները,
• Ուսումնասիրել դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի, հիվանդությունների օջախների վերաբերյալ տեղեկատվությունը և օջախների վերացման համալիր միջոցառումների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ,
• Ուսումնասիրել անասնաբուժության և անասնաճարակային միջոցառումների ծրագրերի մշակման հետ կապված աշխատանքները,
• Հավաքագրել պետական աջակցությամբ իրականացվող հակաանասնահամաճարակային միջոցառումների, դրանց իրագործման համար անհրաժեշտ գույքի, պարագաների և պատվաստանյութերի չափաքանակների ճշգրտման, ձեռք բերման և բաշխման վերաբերյալ տվյալները,
• Համակարգչի միջոցով ստեղծել անասնաբուժական միջոցառումների, հիվանդությունների հաշվառման ու գրանցման տվյալների բազա,
• նախապատրաստել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, հաշվետվություններ, զեկուցագրեր, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր:

## 3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

### 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

| | | |
|---|---|---|
| 1 | **Ուղղություն** | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն |
| 2 | **Ոլորտ** | Անասնաբուժություն |
| 3 | **Ենթաոլորտ** | Անասնաբուժություն |
| 4 | **Մասնագիտությունը** | Անասնաբուժություն |

### 3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

### 3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կենսաբանական գիտությունների կամ առողջապահության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Բանակցությունների վարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

**4.Կազմակերպական շրջանակ**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: